ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ, *Հայոց պատմության դասերն ու պատգամները, Ե., «Գիտություն» հրատ., 2013, 631 էջ:*


ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՅՈՑ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԴԱՍԵՐՆ ՈՒ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2013

Լույս է տեսել պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանի նոր, ստվարածավալ ժողովածուն՝ «Հայոց պատմության դասերն ու պատգամները» վերնագրով: Գրքում ընդգրկվել են հեղինակի՝ հայաստանյան և սփյուռքյան մամուլում տպագրած հոդվածներն ու հարցազրույցները, որոնք վերաբերում են հայագիտության ու հայոց պատմության բազմաթիվ ու բազմաշերտ հիմնահարցերի նորովի քննությանը և պատմագիտական նոր մոտեցումներին ու գիտելիքներին:

Ժողովածուի առանցքը հայ հանրության առջև ծառացած կարևորագույն հիմնահարցերն են (կորուսյալ Հայրենիք, Արցախ, Զավախք, հայոց պետականություն, մայրենի լեզվի, ժողովրդագրության խնդիրներ), որոնց մեջ գերակշռում է հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու հայոց անուրանալի պահանջների հատուցման թեման:

Եթե մինչ այժմ հայ հասարակությանը Ա. Մելքոնյանը հայտնի էր իր գիտական աշխատություններով և ժողովածուներով, ապա սույն գրքով գիտնականը, հրապարակախոսն ու հրապարակագիրը ներդաշնակորեն միահյուսվում են մեկ անձի մեջ և օրգանապես փոխհարստացնում, լրացնում են միմյանց: Հայոց պատմության ճակատագրական պահերն ու դարաշրջանները, մեր դարավոր ընթացքի դրամատիկ ու խրթին հարցերն ու հարցականներն ընդգրկող սույն ժողովածուն, առաջին էջից մինչև վերջինը, չթուլացող ու անհագ հետաքրքրությամբ է համակում ընթերցողի միտքն ու հոգին, վերստին բորբոքում ազնիվ, անկաշառ հայրենասիրության ու պայքարի ոգին:

Հայալեզու և օտարալեզու բազմաթիվ լրատվամիջոցներում և պարբերականներում («Ազգ», «Հայոց աշխարհ», «Հայաստանի զրուցակից», «Ալիք», "Голос Армении", «Ազդակ», «Երկիր», «Ազատամտություն», «Գիտություն», «Կապիտալ», «Իրավունք», «Առավոտ», «7 օր», «Ժամանակ», «Հայաստանի Հանրապետություն», «Հրապարակ», «Վեմ» ռադիոկայան, «Ռադիոլուր», «Հայկական ժամանակ», «Հայ զինվոր», «Զրուցակից», «Ավանգարդ», «Հայացք», "Собственник Армении", "Еркрамас" և այլն) տպագրված հարցազրույցներում պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը ցուցաբերում է բազմակողմանի, խոր իմացություն ոչ միայն հայոց պատմության, հայ գրականության, հոգևոր և նյութական մշակույթի

բազմապիսի դրսևորումների վերաբերյալ, այլև՝ մեծագույն ցավ և պատասխանատվություն մեր ժողովրդի անցած ճանապարհի ու ներկայի հանդեպ:

Ժողովածուում զետեղված ծավալուն նյութը պարզ ու հստակ ցույց է տալիս, թե պատմաբան գիտնականն ու հրապարակախոսը ինչ հետևողական ու ակտիվ պայքար է մղել հայոց պատմության կեղծարարների, հատկապես վրաց և թուրք-ադրբեջանական պատմաշինարարների դեմ: Հայոց ցեղասպանության ուրացման և խեղաթյուրման դեմ Ա. Մելքոնյանը սկզբունքային, համառ ու աննահանջ պայքար է տանում շատ վաղուց: Հարցազրույցներից մեկում պատմաբանը, անդրադառնելով հայ-թուրքական, այսպես կոչված, «հաշտեցման հանձնաժողովի» կազմավորման գործընթացին, աներկբա հավատացնում և հաստատում է, որ դա թուրքական դիվանագիտության խորամանկ խաղն էր հայոց ցեղասպանության ճանաչման հաղթարշավը կասեցնելու համար: Նա մատնանշում է հետևյալը. «Թուրքերը մեզ կարողացան ներքաշել գիտական բանավեճի մեջ, և եռամյա անպտուղ քննարկումների ընթացքում որևէ արդյունք չարձանագրվեց: Եվ պատահական չէր, որ այդ երեք տարիների ընթացքում թուրքերը կարողացան աշխարհի շատ խորհրդարանների համոզել, որ կարիք չկա խնդրին անդրադառնալ ամենաբարձր մակարդակով, քանզի, ահա տեսեք, իրենք՝ հայերը, մեզ հետ բանավեճ սկսելու բարի կամք են դրսևորում, և այդ բանավեճի արդյունքում կերևա, թե ինչն է խնդրի էությունը: «Հաշտեցում» բառն իսկ ամոթաբեր է մեզ համար…

Ո՞ւմ հետ ենք հաշտվում, ոճրագործը և զոհը իրավունք չունեն միմյանց հետ հաշտվելու» (էջ 121):

Ա. Մելքոնյանը, նշելով, որ մեզ փորձում են «տեղավորել» «հաշտեցման» միջազգային չափանիշների մեջ, ինչպես Գերմանիայի և Իսրայելի պարագայում էր, ընդգծում է, որ գերմանացիներն ընդունել են իրենց մեղքը, հատուցել դրա համար, իսկ մենք չենք կարող թուրքի հետ այսօր խոսել հաշտեցման մասին. «Նորմալացում», «հաշտեցում» բառերն այսօր անընդունելի են թուրքական կողմի անհաշտ կեցվածքի պատճառով: Բանը նրան է հասել, որ թուրքերը ոչ միայն չեն ընդունում իրենց մեղքը, այլև մեզ են մեղադրում ցեղասպանության համար… Ամո՛թ է կրավորական վարքագիծ դրսևորելը և՛ գիտական, և՛ քաղաքական մակարդակներում» (էջ 138-139): Այս և շատ այլ առումներով Ա. Մելքոնյանը ընթերցողներին հորդորում է լինել զգաստ և պատասխանատու: Պատմական ժողովրդագրության մերօրյա դպրոցի հիմնադիրն ու ղեկավարն ահազանգում է, որ օտարները, կեղծելով մեր պատմությունը, ամբողջովին քաղաքականացրել են այն, որի հետևանքով մոռացության է մատնվել այնպիսի կարևոր բնագավառ, ինչպիսին պատմական ժողովրդագրությունն է: Իսկ այդ բացթողումը անասելի ծանր հետևանքներ է թողել քաղաքական առումով, քանի որ հարևան ու այլ քոչվոր ժողովուրդները ուղղակիորեն յուրացրել են հայ ժողովրդի պատմության զգալի հատվածներ ու դրվագներ: Հայ պատմաբանը վերոնշյալ չարանենգ հարևաններին անկեղծորեն խորհուրդ է տալիս ճշմարիտ պատմություն ստեղծել, ոչ թե գրել, իհարկե, կեղծելով ու լիովին խեղաթյուրելով իրականությունը: Սա վերաբերում է ոչ միայն թուրքերին ու ադրբեջանցիներին, այլև բարեկամ համարվող Վրաստանին, որն ամեն քայլի դիմում է Ջավախքի վրացականացումը «օրինական» հիմքերի վրա դնելու համար: Ժողովածուի ստվար էջերում, որոնք մեր պատմության իրական կնիքն են կրում, խորապես գործածվում են հայրենի

պատմության ոչ հեռավոր անցյալի՝ XIX–XX դդ., ներկա շրջանի բարդ, խճճված, բազմաբնույթ ու դրամատիկ հարցերն ու հարցադրումները (Արևմտյան Հայաստանի հայաթափություն ու հայրենազրկություն, Ջավախք և հայ-վրացական սահմանային խնդիրներ, Արցախի ու Նախիջևանի հիմնահարց, 1918-1920-ական թթ. հայկական պետականության ստեղծման, զարգացման ու անկման օրինաչափություններ, դասեր ու եզրակացություններ, մայրենի լեզվի և հոգևոր ինքնության մաքրության ու անաղարտության, մշակութային հարստության ուսուցման, դաստիարակության ու մտածողության բազմատեսակ խնդիրներ և բազմաթիվ այլ հարցաշերտեր):

Որպես հայագետ, ազգային ճշմարիտ չափանիշներով առաջնորդվող մտավորական՝ Աշոտ Մելքոնյանը հանդես է գալիս այն ամենի դեմ, ինչը խանգարում է ազգային առողջ ուժերի համախմբմանը, տոհմիկ հայկական դիմագիծը վերականգնելուն և ազգային ավանդական արժեքներով առաջնորդվող պետականության կերտմանը: Ահա թե ինչու նա վճռականորեն դեմ է օտարամոլության ամեն մի դրսևորմանը, հայոց լեզվի նկատմամբ արհամարհական վերաբերմունքին, հայ մարդու ներքին էության խեղաթյուրման տարատեսակ դրսևորումներին: Հայ ազգային կեանքի առողջացման, արդարամիտ հարաբերությունների ձևավորման բազմաթիվ նոր մոտեցումներ և սկզբունքներ են առաջադրվում այս գրքի էջերում:

Անվանի պատմաբանի խորին համոզմունքով՝ հայոց պայքարը արդարացի է, անպայմանորեն իրագործվելու են մեր ժողովրդի դարավոր իղձերն ու նպատակները: Իսկ թուրք կեղծարարների դեմ պարտավոր է պայքարել ամեն մի սերունդ, և ամեն մի հայ այդ պայքարում դնելու է իր կարողությունները. «Ես միշտ սիրում եմ ասել, որ պատմական հիշողությունը հզոր զենք է: Ամեն մի սերնդի չի վիճակվելու տեսնել մեր երկրի ազատագրումը, բայց եթե ամեն մի սերունդ դնի իր քարը և հաջորդ սերնդին գենետիկորեն փոխանցի այդ պատմական հզոր զենքը, մի սերնդի անպայմանորեն դա վիճակվելու է, դրանում ես կասկած չունեմ: Երանի այն սերնդին, որ դա կտեսնի» (էջ 252):

Աշոտ Մելքոնյանն իր արժեքավոր մոտեցումներով ընդլայնում է մեր ազգային ու հանրային մտահորիզոնը, յուրովի սահմանում մտածողության ու ներհայեցողության նոր չափանիշներ, նոր որակ և աստիճան՝ յուրաքանչյուր հայորդու հորդորելով հաշվի առնել և մշտապես առաջնորդվել հայոց պատմության դասերով ու պատգամներով:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ա. Հ.
Պատմական գիտությունների թեկնածու